


Մուշ, Էրզրում, Խարբերդ, շատ դիւրաւ չէին կրնար Պոլսոյ ազգեցեալներէն տակ խնայ: Եւ հիմայ՝ որ քիչ շատ գիր ու դպրութիւն ազգին բոլոր հասարակութեանց մէջ տարածուեցաւ, անոնք ալ ունեցան իրենց գրողները՝ ժամանակաւ այնքան հազուագիւտ, որոնք կազմեցին նոր տարրը մեր մատենագրութեան մէջ, զուսմեղիս գրականութիւնը: Պոլսոյ և Թիֆլիզի ընդ մէջ խնայով այս գաւառները՝ երկուքին ալ ազգեցեալները կրած են, գաւառներու որ դպրոց չէ ունեցած հաւասարապէս թէ ուսուցչայ և թէ տաճկահայ ուսուցիչներ, և որ աշակերտ չէ երգած թէ արեւմտեան և թէ արեւելեան աշխարհաբարով: Յետոյ՝ անած մեծ յոյսերով՝ այս գաւառացիները, և մարդ եղած մեծ յուսախաբութիւններով, այնպիսի ժամանակ մը հրապարակ նետուեցան, ուր ազգը կ'ըմբոստանար և արիւն կը թափէր: Եւ ծիծաղներով յոյսերուն զոր ունէին, տրտունջի քննադատութիւններով զոր ստացան և հրացանի բոմբիւններով զոր լսեցին, կազմեցին իրենց ոճը, նուրբ և վերլուծող՝ Ռուբէն Զարդարեանի մէջ, յորձանապատոյտ և հզօր Ռուբէն Պարթեւի մէջ, տիրապէս զուարթ Առանձարի մէջ, որուն սիրայօժար կը մոռնամ քանի մը թերուութիւնները նշանակել:

Հ. Ն. ԱՆԻՐԻԿԵԱՆ



ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ՏԻՔԵՐԻՍԻ ՆԱԽԱՎԱՐՆ

(Շար. տե'ս էջ 381)

ԳԼՈՒԽ Ե.

ԱՆԵՐԵՒՈՒԹԱՑՈՒՄԸ

Սատիկ ցաւով լսեց վաղերիս աղետալի լուրը, և չուզեց մտիկ ընել Մարկեղոսի միտքաբական խօսքերուն՝ որ կ'ուզէր խաբէական յոյս մը ծնանել տալ իրեն սրտին մէջ:

Երկու Էրիտասարգներուն վիճակն իրաւքնէ

յուսահատական էր. մտնէ ամիս ընդունած դրա՛նին լմացած էր, և թանկագին առարկաներով շրջապատուելով հանդերձ՝ կրնային մեռնիլ աւսթութեանէ. ստոյգ է թէ շատ քան ունէին ծախելու, բայց այնպէս դիւրին չէր գնող մը գտնել: Նոյն վայրկեանին. ասկէ զատ, Մարկեղոս որչափ որ պատարկագորտ մ'էր՝ բայց այսու հանդերձ մաքն ուղղութիւն ձեռքէ թողած չէր, ուստի չէր ուզէր ամենեւին զաղտի հեղու տալ: Նիլ բան մը որ իրաւունքով պարտաւորներսն կ'ինկնար:

Չկրնայով լաւագոյն բան մը մտածել վերջապէս որոշեցին թողուլ իրենց տունը և գերիները, յանկարծակի Գաղմատեան երթալու պարտաւորով:

— Հոգմայ որ անկիւնին մէջ պիտի ծածկենք մեր ամօթալի խղճութիւնը, րօտա վաղերիս արգելքը սրբելով:

Մարկեղոս յօնքիր կնճեց և զլուխը միտ կողմ դարձուց, որպէս զի քողարկէ յուզումը, և վերջը պատասխանեց.

— Չեմ գիտեր, քուրիկս, խէջք զլուխս չէ, խնջիլ պէս բան մը դարձած եմ:

— Անտարակոյտ ուտելու բան ալ պիտի չունենանք, քանի որ դրամ չունինք, շարունակեց վաղերիս:

— Ոչինչ, ոչինչ, ըսաւ Մարկեղոս գառնապէս:

— Մանրերկորդ մը սպասէ ինձի, եղբայր, աւելցուց օրիորդը. և հեռանալով՝ քիչ մը վերջ նորէն դարձաւ հետը բերելով արծաթապատ եղեմափայտէ արկղիկ մը, և գայն Մարկեղոսին տալով՝ ըսաւ արտասուալից.

— Անաստիկ գոհարկէններս, կրնանք գաւտնք ծախել:

Վաղերիս այս խօսքերը արտասանելու պահուն չէր՝ արցունքով կու լար. իր ունայնտութիւնն չէր կրնար աւելի մեծ զոհ մ'ընել՝ քան զրկուելով իր այնչափ սիրած այս զարդերէն. այս առաջին ցաւալի հարկն էր՝ զոր կը գնէր իր վրայ չքաւորութիւն. անտարակոյտ ինքն աւելի պիտի քնարէր որ իր կեանքէն տասը տարիներ պակսէին քան թէ զրկուիլ այն գոհարեղէններէն՝ որոնք կը ծառայէին իր գեղեցկութիւնը դուրս ցաւեցնելու:

— Արճիւտէ՛ ճամբուն մէջ՝ ուր կը գտնուին ակնավաճառներու խանութներն, գիտ մին մարդ կը ճանչնայ, ըսաւ Մարկեղոս, որուն այտերն կասկարմիր դարձեր էին՝ մտածելով միայն թէ ինքն պիտի ներկայանայ հոն իբրեւ խեղճ վաճառող մը՝ ուսկից միշտ շալալօրէն գնած էր մինչեւ հիմայ:

— Չենք կրնար Միլոսը զրկել հոն, հարցուց վաղերիս:

— Ի՛նչ բանի կ'ուզես որ գայ բնութեան այդ վիժածն, էթէ ոչ ծաղրածութեան նիւթ ըլլալու, պոռաց Մարկեղոս անհամբերութեամբ: Եւ արեւնոյն վայրկեանի զգաց՝ որ մէկը կամացուկ մը իր պարեգօտէն կը քաշէր. յանկարծակի եկած դարձաւ և տեսաւ Միլոսը՝ որ հազիւ հազ վիւրցընելով կաշիէ պարկ մը՝ վախկոտութեամբ կեցիւ էր հոն իր քովը:

— Ի՞նչ կ'ուզես, ըստ իրեն երիտասարդն ամառաբուժեամբ:

— Պատրիկ, Գաղմատիայէն հասած թղթաբերին իմացուց ինծի մօրեղբորդ մահը, և հիմայ դրամ ընդունելուդ սովորական ժամանակն անցած ըլլալով՝ անտարակոյս պէտք պիտի ունենաս դրամի, ուստի առ բեգի այս բերածս, քիչ է՝ բայց ասկէ աւելի չունիմ, և մի անարգելի քու ծառայո՞ւմբ ընթերցով այս բեգի տուածը:

— Ի՛նչպէս ձեռք ձգեցիր այս դրամը, հարցուց Մարկեղոսը գոռոզաբար:

— Իմս է, պատասխանեց Միլոս. դու շատ անգամ դիտ ծեծելէն վերջը՝ ինծի դրամ մը նուէր կու տայիր. ասկէ զատ՝ քու սեղաններուդ մնացորդներէն ինծի ընկած բաժնիդ կը ծախէի, և ասա ազգահի մը խնայողութեամբ կըրցայ դիզի այս գումարը, նախատեսելով որ իմ բարերար լուսւոյս որդիքին կանուխ կէս ուշ պէտք կ'ունենան անոր:

Մարկեղոսի դէմքն լատ-կարմիր եղաւ. իր մէջ հազար անգամ ծծծ կերած այն խղճ արարածէն օգնութիւն ընդունելը՝ իրեն համար չափազանց խոնարհութիւն կ'երևէր, ուստի ետ մղելով պարկը՝ լուռ ու մունջ մնաց:

Վաղերիա իսկոյն եղբորը սիրտը կարգաց, և վախելով որ չըլլայ թէ անիկայ կոշտ մերժուումով մը չափազանց խոնարհեցնէ բարի թղուրի, այս բանիս առջեւն առաւ. ընդունելով անկէ փութիկ պարկը, և ժպտաբեր ու կէս մը արցունքով շարունակեց խօսքը:

— Հնորակայութիւն, Միլոս. մօրս յիշատակին համար կ'ընդունիմ վեհանմն նուէրդ:

Մարկեղոսը կատաղաբար ոտքը գետնիդ զարկաւ, և արիւն բերելու չափ խածաւ շրթունքները, բայց բնաւ խօսք մը չհանեց բերին. իսկ թղուրն լի երախտագիտութեամբ պագած Վաղերիայի ճերմակ ձեռքը:

ձիւղ նոյն իրիկունը երկու երիտասարդներն լալով խողովոյն իրենց փառաւոր տունը և գնացին չորսմայ ամենէն ամայի տեղ մը գտնուող խեղճ տնակ մը մջլ բնակելու, հետերին տանելով մի միայն Վաղերիայի գոհարեղէնները. յետոյ Մարկեղոսը վերկտող մը գրելով Գեկոսին՝ իմացուց անոր իրենց Գաղմատիա մեկնելը և միանգամայն աղաչեց որ այս բանն ծանուցանէ պարտատէրներուն, որպէսզի զան տիրանան գերիներուն. և տունը ծախելով՝ անոր դրամէն հանձն իրենց իրավէն առնելիք պարարտ: Գոռոզութիւնն էր որ կը զոգէր անփոյթ երիտասարդը այսպիսի սուտ մը խօսելու, և կը ստիպէր զինքը բաժնուելու իր միայնակ իմաստունն ու հասարակրմ բարեկամէն՝ որուն խորհուրդներն կրնային առաջնորդել իրեն դէպ ի բարին:

Միլոսին յանձնուեցաւ որ այս թուղթն հասցնէ Գեկոսին ձեռքը. թղուրն նոյն իրիկունը պահուրեցաւ պատրիկին տանը շրջակայ տեղ մը, և յետոյ հեռուէն տեսնելով անոր տունը գտնուելը՝ իսկոյնն նամակը դրաւ տան դրան սեմին վրայ ու փախաւ:

Այսպէս խորհրդաւոր կերպով ձեւաք հասած թուղթն կարգաւով՝ Գեկոս չհաստաց իր աշ-

քերուն. Մարկեղոսի և Վաղերիայի այսպէս յանկարծական մեկնումն անկարելի կ'երևէր իրեն և միանգամայն սաստիկ կը տագնապեցնէր զինքը:

Ազնիւ երիտասարդն մինչեւ խոր գիշեր վեր ու վար փաշէ իր փոքրիկ սենեկին մէջ, և երբեմն երբեմն կանգ առնելով՝ կը կոթընցներ պատին իր բորբոքած ճակատը. փորձեց քանի մ'անգամ պարզել քայլ ի զօր, վասն զի հազար թէ հանգչած՝ նորէն ուժքի կ'իյլէր ու կը սկսէր շրջապալել: Վերջապէս չկրնալով սրտին յուզումը զսպել, առաւօտը լուսընդալուն՝ գնաց Մարկեղոսի տան առջեւ, բայց չուզելով ներս մտնել՝ կանգ առաւ գաւթին մօտ, ուր կարծես թէ և ինչպայտութիւնն յսել կու տար իրեն Վաղերիայի կիթախին տխուր ձայնը. յայթուած այս պիտի տխուր յուզումէ մը՝ թողուց այն տեղը և ճամբայ ելաւ դէպ ի Հերոնիմոսի տունն երթալու համար, ուր քիչ ատենէն հասնելով՝ սուրբ Վարդապետն քացաւ իրեն դուռը և մէկտեղ մտան փոքրիկ սենեակ մը:

Աննեկին մէջտեղը կը գտնուէր քարէ սեղան մը՝ որուն վրայ դրուած էին բազմաթիւ մազաղաթներ, սեւ փայտէ խաչ մը, մարգար գանձ մը ու կանխիկ մը. ասոնցմէ զատ կը գտնուէին իրր կանկարասիք երկու մարմարեայ աթոռակներ, նեղ ու ցած անկողնիկ մը՝ ծածկուած բրդէ անպաճոյն փոռոցով: Մարկեղոս տիկնոջ բոլոր սենեակներու մէջէն՝ զորս Հերոնիմոսի տրամադրութեան ներքեւ թողուած էր, անիկայ այս փոքրիկ սենեակն ընտրէր էր իրեն, որ Թերաշիդի անպատականի մը խցիկին կը նմանէր ճիշդ:

Կեկոս ծուներ դրաւ Հերոնիմոսին առջեւ՝ որ ձեռքը անոր գլխուն վրայ զննելով՝ օրհնեց զինք, և լուս մը դիտելէն վերջը՝ ըսաւ.

— Կ'երեւի որ տագնապ մ'ունիս, որդեակ:

Այո, հայր. բարեկամս Մարկեղոսը՝ որ քու օգնութեամբ կը յուսացուէր թէ գառնայ իր զարտուղի ճամբէն՝ յանկարծակի փախեր է՝ առանց ձեռքս սեղմելու, առանց վերջոյն ողջոյն մ'ենծի տալու. կարգա՞ւ...

— Ազնեայտ մ'է այդ երիտասարդն՝ ըսաւ Հերոնիմոսը՝ կարգաւով Մարկեղոսի թուղթը, և վերջի աւելցուց. Իս մայրը մ'իմ և կրնամ սխալ լիլ, բայց սիրտս ինծի կ'ըսէ որ բարեկամդ սուտ կը խօսի այս խօսքերը քեզի գրելով. դժժբախտութեան ձեռքն թերես ծանախանայ այդ ապերձանիկի գլխուն վրայ, բայց ի՛նչ կրնաս ընել յախտեանկան Աստուծոյ կամքին հակառակ՝ որուն դատաստանն անդուռ մ'է անասաւ մահ:

— Կ'ուրո՞ւմ գիշեր փնտռել, գոչեց Կեկոս աշխուժութեամբ:

Հերոնիմոսի խիստ ու քննիչ նայածքն տրեւեկուեցաւ երիտասարդ պատրիկի աշքերուն վրայ. կարծես թէ կ'ուզէր կարգաւ անոր սիրտը. վերջը գլուխը ցնցելով՝ մեղմ և որոշ ձայնով աւելցուց.

Այո, փնտռէ այն օրիորդը՝ որ կը գայ. թակեցնէր քրիստոնեաները իր ճեմարկցուցած

դէմքովը, այնչափ ճերմակ՝ որ տեսնողին մտքին մէջ կ'արթնցնէր մարմարինոյ կուռքերուն յիշատակը. փնտռէ՝ գանիկայ՝ որ շքեղ հագուստ, ներովը տեսնողներու հիացումը կը գրաւէր իր վրայ, և խօսել կու տար իր տուած բազմախորտիկ սեղաններուն վրայ՝ որոնցմէ և ոչ հացի փշրանք մը կ'ինկնար իր տան առջև հանգչող աղքատին։ Այո, փնտռէ գանիկայ, բայց այն կ'ապտակով որ առ Աստուած դառնայ, և զղջաւով մեղքերուն վրայ՝ անցնէ կոյսերուն թիւն, որոնք փառք են Քրիստոսի եկեղեցւոյն։

— Աստ է իմ միայն փափաքս, և ուրիշ բանի չեմ որոճար, և Աստուած որ սրտիս խորերը կը թափանցէ՝ գիտէ թէ որչափ անկեղծ են իմ զգացումներս, պատասխանից՝ Դիկոս լի տրամուխեմբ։

— Կը հաւատամ քեզի, որդեակ, ըսաւ Հենրիմոն, բայց դու միայն չես կրնար փնտռել կանխիկաւ։ Ուստի գնա բարեկալութունի Ասելլա տիկնոջ, և բւէ իրեն իմ կողմէս որ ձեռնառու ըլլայ քեզի բարեկամը գտնելու. անիկայ շատ մարդ կը ճանչնայ աշխարհի մէջ, և թերեւս քեզի օգտակար կ'ըլլայ իր խորհուրդներովը. գնա՝ Աստուած առաջնորդ ըլլայ ու լուսաւորէ զքեզ։

Հենրիմոնի տնէն կ'ելլելով՝ Դիկոս անմիջապէս գնաց Ասելլայի տունը և յայտնեց բարի տիկնոջ իր այցելութեան պատճառը, և ասոր աւելի բացաւ իր սիրտը. քան թէ Հենրիմոնին. վասն զի կնոջ սիրան աւելի վստահութիւն կ'ազդէ, և Ասելլա ցաւակից եղաւ իր բարեկամութեան որդւոյն վշտաւոր։ Խոնճապարդ տիկնոյ մասնաւոր վիշտ չունենալով՝ կատարեալ խաղաղութեամբ կ'անցնէր կեանքը և մասնակից կ'ըլլար ուրիշներու վշտակութիւններուն. իր աշխերն՝ արցունք մ'ունէին ամէն ցաւի համար, չրթունքներն՝ միջիթարական խօսք մը ո՛ր և է դժբախտութեան համար, և երբ չէր կրնար վշտացնալ ներուն օգնել կամ միջիթարի գանոնք՝ այն առանձն կ'ազդէր Աստուծոյ անոնց համար։ Ասելլա՝ հրեշտակ մ'էր բարութեան, և քրիստոնէական սիրոյ մէջ՝ նախանձ կը շարժէր իր ժամանակի բոլոր բարեկալ տիկնիկներուն իր մոռնիրններ կը պատմէին, որ մինչդեռ մօրը արագադիպ մէջ էր՝ իր բարեկալ տան հայր երազին մէջ կը տեսնէր որ իր ամուսինն կը ծնանէր գուռ բերեղէ անօթ մը, և իրաւցնէ Ասելլա առնօթ մէջ ընտրութեան, և իր անարատ կեանքն յարառու բարեգործութիւն մը։

Տիկնին իսկոյն գուշակեց՝ որ երիտասարդին տրամուխեմբն ոչ այնչափ Վարկեղղոսին մեկնելուն համար էր՝ որչափ աւելի Վարկեղղոսին, ուստի իր հրեշտակային բարութեամբն ժպտեցաւ ահոր, վասն զի լաւ գիտէր՝ որ Դիկոս Փուլվիտի սրբաին մէջ բնաւ չար զգացում չկար, և զեռ աւելի կը հաստատուէր իր այս համոզումին մէջ՝ յիշելով որ քանի մ'օր առաջ Դիկոս ուզած էր մտերմաբար սիրտը յայտնել իրեն, բայց պարագաներն թոյլ չէին տուած։

— Երբոր ժամանակ եղած են մ'Գաղմատիայի մէջ, ըսաւ տիկնին, բայց բնաւ չեմ գիտեր քու բարեկամներու մօրեղբորը բնակած տեղը, սա-

կայն կը ճանչնամ սինկղիտոս մը՝ որ շատ երկար ատեն բնակած է հոն, և կրնայ տեղեկութիւն ունենալ այս մեր խնդրոյն վրայդ. ուստի քանի մ'օր վերջ եթէ նորէն դառնաս հոս, այն ատեն իրմէն լսածս կրնամ հաղորդել քեզի։

Դիկոս այս յոսով քիչ մը միջիթարուած՝ բաժնէ նուտու տիկնին, և Վարկեղղոսի թուղթը առաւ. պարտատէրներէն մէկուն, որ չարաչար կատողած ահոր անհետանալուն վրայ՝ սպառնալով ձեռք բարեկալել տալ զիեղը՝ Կաղմատիայի մէջ և դատաստանի կանչել դատաւորին առջեւ՝ որպէս զի պաշտօնապէս թողու իր ստացուածքները։

Դիկոս զայրացած հոգւով թողուց վաշխառուն, և երեք օր անհամբեր սպասելէն վերջ՝ դարձան նորէն տիկնոջ քով՝ որ սինկղիտոսի տուած աւելեկութեան համաձայն հաղորդեց իրեն, թէ Վարկեղղոսի և Վաղերիայի մօրեղբայրն յանկարծաւ կ'սկսեցէր էր՝ թողով իր հայրենի ժողովուրդն, թիւնը անագին պարտքերով բեռնաւորուած։

— Հերոնիմոս իրաւուք ունի. Վարկեղղոս կը տանէ ինձի գրած թղթին մէջ, զոչեց Դիկոս յանկարծակիի եկած ու վշտացած այս լուրին վրայ։

— Բարեկամներուդ Կաղմատիա երթալը շատ հաւանական չերեւիր, քանի որ իրենց հանգուցեալ մօրեղբոր ժողովութեանէն չէին կրնար բան մը ձեռք ձգել, ըսաւ Ասելլա։

— Աստուած իմ, ո՛ր ծածկուած են արդեօք, ի՞նչ անխելք որոշողութիւն մ'ըլլած, վրայ բերաւ Դիկոս՝ ձեռքերով ծածկելով դէմքը որպէս զի չտեսնուի այլագունութիւնը։

— Մի՛ տագնապիր, Դիկոս, նորէն կը գտնենք զառնորդ, շարունակեց Ասելլա. քեզի պէս եւս կ'ողորձաւ այն անփոյթ օրիորդը և այն մոլորեալ երիտասարդը, և կը խոստանամ որ ամէն շանքի գործը կը դնեմ գանոնք փնտռելու. որչափ որ Հոովմն ընդարձակ է, սակայն շուտ թէ ուշ կը գտնենք առնոց պահուրդած տեղը։

— Այո, նորէն կը գտնենք գանոնք, այնպէս չէ՛, Ասելլա, ըսաւ պատրիկն միջիթարուելիս փնտռող աղու մը պէս։

— Աստուծով կը յուսանք, վասն զի առանց Աստուծոյ օգնութեան՝ շատ տկար է մարդոս կամքն, պատասխանեց բարեկալ տիկնին։

Բոլորովին վշտացած՝ Դիկոս վերադարձաւ իր տունը, և չուզելով ժամանակ կորսեցնել անմիջապէս փնտռելու ելաւ իր բարեկամները, բայց ընդունալն տեղը. Վարկեղղոսի տան մէջ մնացած գերիներուն տեղեկութիւն հարցուց, ի պատմամէ՛ս աւելի զիեղը ցորեկ ասդին անդին պտրտեցաւ, բայց թէ՛ իրեն և թէ՛ Ասելլայի խուզարկութիւններն անօգուտ եղան։ Վերջապէս խնձր Դիկոսն յոգնած ու վհատած՝ բոլորովին յուսա-

1. Հոովմէական բաղադրանքն կրնար իր ստացուածքը թողուլ պարտաբար՝ որ կ'արեւ զատուարին առջև։ Ե՛րբեմն որ այս ստացուածքն իմա է աւելի ատեն զատուարի պարտապանին շարքենով կը ստուգէր այս բանը, և այսպէս օրէնքով կը վաւերացուէր ստացուածքն հրաժարուին։

հատեցաւ զանոնք նորէն զանելէն, իսկ անոնք և ոչ իսկ մտքերնէն կ'անցնէին Դեկտտը, որ այսչափ հոգ կ'ընէր ու կը տանջուէր իրենց համար:

ԳԼՈՒԽ 2.

ՄԵԿՆՈՒՄԸ

Գեղեցիկ գիշեր մ'էր խաղաղ ու պայծառ. լիալիր լուսինն կը լուսաւորէր Ապպեան ճանապարհը և իր եզերքին վրայ կառուցուած հսկայազորք գերեզմանները, որոնց մնացորդներն կը մնան ցարդ՝ իբրեւ վկաներ թէ մալին ինչ կը կործանի, թէ ժամանակն բան մը չի յարգեր: Մարդկային ունայնասիրութիւնն կտնգնած է այս տխուր բնակարանները՝ յուսելով որ տաքիններով անմիասն ու կանգուն պիտի մնան, սակայն այսպէս չեղաւ: ասիւն դարաշրջանն թողուց հոն իր հետքերը, և ներկայիս ուրիշ բան մնացած չէ այդ պատուրկական գերեզմաններէն՝ բայց միայն տանւ կոյտեր՝ որոնք վրայ կը մազլցին մակաբոյժ բոյսերն, և իրենց ստորոտը կ'անձին փշալից ակքաններն:

Այդ հոյակապ գերեզմաններէն մէկուն առջեւ նստած կեցեր էր ոսմակական տարազով մարդ մը, և կը թուէր թէ կը գմայլէր իր աչքին առջեւ բացուող գեղեցիկ տեսարանին վրայ: և իրաւունքն ասկէ աւելի հիացման արժանի բան մը չէր կարելի գտնուիլ. աշակողմը՝ գերեզմաններէն, որոնք իրենց զուգահեռական գծեր կ'երկբանային դէպ ի կապուած սանդղ ճամբուն երկայնութեամբ. իսկ ձախակողմը՝ հեռուէն կը տեսնուէր իգերեան անտառն, և աւելի անդին վաղեմի Դշխոյն աշխարհի իր սխներով, իր տաճարներով, և մանէն աւելի մանաւանդ աչքի կը գարնէին հսկայազորք պարիսպներն կայսերաց պալատին՝ որ անապատ դարձած էր այն օրէն՝ որ նախանձորով մ'ելած էր Հոռոմայ դէմ Ալեհեթի մէջ. յետոյ մինչեւ Տուսկուլեան լեռներուն ստորոտը տարածուող անտուն դաշտալայնի, և ասոր միջին անցնող ջրմուղներն. մէկ կողմէն մեծ ծովի խնները մայրաքաղաքին այն ինքնակալութեան՝ որ զառամած և մինչեւ ծովը կրճուած՝ հոգեմարտի մէջ էր, միւս կողմէն գերեզմաններն լուսաւորեալ ճամբափայլ ճառագայթով լուսնին՝ որ շքեղ տրորութեան հրեւելք մը կու տար այն գեղեցիկ համայնապատկերին:

Հոյակապ գերեզմանին ստորոտը նստած մարդն երբեք մէկ կողմը երբեքն ալ միւս կողմը կը դարձնէր գլուխը. ինչ բանի վրայ կը մտածէր արդեօք անիկա՞յ, Բանաստեղծ մ'էր արդեօք՝ որ գիշերային լուսնեան մէջ և լուսնի պօռն լուսին կը ներշնչուէր երգով մը, թէ փիլիսոփայ մը՝ որ գերեզմաններու մէջտեղը կեցած կը մըտածէր աշխարհի ունայնութեան վրայ: Անիկա՞յ ոչ մէկն էր և ոչ միւսը. իր աչքերն մեքենայաբար կը նայէին գերեզմանին, յետոյ սեւեւ աշուղ գանոնք դէպ ի Հոռոմ, և վստփառն ելնուակայութեամբն աչքին առջեւ կը բերէր պատրիկներուն ճոխ բնակարանները, կը լսէր կնուխուռներու աղաղակները, կը ծափահարէր

կաբաւուհիներուն ոստումներուն: Մէկ մ'ալ յանկարծ հնձեմանքի նման ցաւազին հառապածք մ'ելաւ կտրեքէն, յետոյ ջգածակալն շարժումով մը պատուրկ պարեգօտը, սեղմեց մէկ բուռը, և յիմարական կատաղութեամբ ձեռքերը դէպ ի վեր բարձրացնելով սկսաւ հնձիկտալ:

Այնքան բան լուռ էր, միայն հնձեմանքը կը լրսուէր այն մարդուն՝ որ երկարատես ողբալէն վերջը ոտքի ելաւ կեցած տեղէն և սկսաւ յանկարծ վազել, երբ թէ վազելով պիտի կրնար ազատիլ իր մտածութիւններէն. և երկար ճամբայ ընելէն վերջ՝ բոլորովին յոգնած և հեւալով կանգ առաւ՝ որդէս գի թիչ մը հառաչէ՝ իր աշակողմը գտնուող բլրակի մը վրայ կանգնուած էր հոյակապ բոլորամեծ գերեզման մը, գեղեցիկ իր վսեմ պարզութեամբ, Չեչիլիա Մետիլլայի շիրիմն էր այն, այն տիկնոջ՝ որուն անունն հասած է մինչեւ մեզի ոչ թէ իր առաքելութեան կամ մեծութեան համար, այլ մը միայն իր անունը քանդակուած բլլալուն համար հսկայազորք գերեզմանի մը քարին վրայ:

Վշտազին մարդն նայուածքը դարձնելով այս հոյակապ շիրմին գոչեց դառնապէս.

— Դու հարստութիւններու մէջ ծնար, ո՞վ Չեչիլիա, և հարուստ մեծար, դու արդեօք Վաղերիայէն աւելի գեղեցիկ էիր ու լաւ ... Եթէ պարկայէն քրոջն կեանքին թէլը կորէ՝ ես ալ կրնամ գնել քար մը, և առանց ուրիշ բարեգութիւն ձեռքի մը թողուի՝ ես ի՞նչ ձեռքովս կը փորեմ գոտ մը իր դիակին համար:

Այս ըսելով՝ Վարկեղոսն ճամբան առաջ տալու մինչեւ կապուած Դուռը, ուսկից անդին անցնելով՝ դարձաւ դէպ ի աշակողմի և մտաւ նրբաւ փողոց մը՝ որ չընկալատուած էր թանկերունիւ մացառով:

Այդ նրբափողոցին մէջտեղը կը տեսնուէր աղետահալ տակ մը՝ անարուեստ և անպատշաճ, որ միայնակ էր՝ բաղկացած չորս փոքրիկ սեւեւակներէ. Կրկու հակվածն ծակեր լոյս կու տային սենեկիկներէն երկուքին, իսկ միւսներն լոյսը կ'ընդունէին առաստաղին վրայ բացուած հեղքուածքէ մը: Այս խրճիթն դեռ նոր շինուած էր, և կը փխրաբերէր քրիստոնէի մը՝ որ վայրկենական հոգեւոր եռանդէ մը մղուած՝ հոն փակուած էր. բայց միայնակեցին կոշտան ցնդած իր օդի մէջ, և նորէն աշխարհ դառնալով թուրուցեր էր անապատը: Միլոս կը բանշնար այս մարդը, և երբ տակն պարսպ մնաց, ուզեց գնել զայն իր ներաղութիւններով դիպած դրամով, բայց ինքն ազատորդի չըլլալով՝ չէր կրնար ո՞ր էր ստացուածք ունենալ, անոր համար Վաղերիային աղաչեց՝ որ ծերութեանը ատեն իբր վարձատրութիւն իր ծառայութեանց՝ երբ Մարկեղոս գինքն ազատ թողու, իրեն միակ փառաքան էր մեծնիլ այդ առանձնական տեղայն մէջ: Որիորդն յուզուած թզուկին աղայանքնէն, ինչ համարեց Մարկեղոսը որ գնէ այդ խրճիթը և զայն Միլոսին րնձայէ: Առաջին անգամ ըլլալով կենքերն մէջ պատրիկն վեհանաճ գտնուեցաւ և ծախսին շինայեց, սակայն բնաւ մտքէն չէր անցնէր որ այդ հիւղին մէջ պիտի ծածկուէր

նաեւ իր խեղճութիւնն՝ ուսկից այնչափ կ'աւրջնար:

Աղիւսաշէն տնակին դիմացը կը տեսնուէին կիսաւեր տան մը աւերակներն. որուն պատերն ծակուած էին շատ տեղերէն՝ անոր պատգազմն. որ երբեմն հիանալի տեսարան մ'ունէր՝ հիմայ բոլորովին կործանած էր, իսկ գաւիթէն ուրիշ բան չէր մնացած՝ բայց միայն երկու ջափառուած սիւներ: Այս մնացորդ աւերակներն էին Միտսի հետաքրքրութեան նպատակն, վստն գի շատ անգամ գիշերը միմնապէս տեսած էր հոն անծաւաթի մը մտնելը:

Մարկեղոս գարկաւ տնակին դուռը, և քիչ վերջը բացաւ թղուկն և խոնարհ ձայնով մ'ըսաւ իրեն.

— Պատրիկ, քոյրդ կու յայ սպասելով քեզի: Մարկեղոս անապարանքով ստեղծութիւն վեր ելլելով՝ նստաւ Վաղերիայի թով, որուն գէմքն շատ դեղնած ու նիհարցած էր, բայց նորէն քրահանգով օրհորդին մէկդի թողած չէր զարդարանքի հին սովորութիւնները. կը կրէր զգեստ մը՝ չափազանց ճոխ այդ իսկզբ բնակարանին համար, և իր թեւերն զարդարուած էին արծաթեայ շղթայիկներով:

— Երբայր, երկու ժամէն աւելի քեզի կը սպասեմ. ինչո՞ւ այսպէս ուշ կը դառնաս, ըսաւ Վաղերիա անոյշ յանդիմանական ձայնով:

— Առանց ուզելու չափազանց ստաշ գնացի: Ապագեան համբուն վրայ, բնկողմած դառն մտա՝ ծովախնկերուս, կամ լաւ եւս ըսել՝ ծրարելուս մէջ, վստն գի պէտք էնք վերջապէս մտածել սպազային, աւելցուց Մարկեղոս խոր հաուշանք մը հանելով:

— Ապագայն կը ներկայանայ աչքիս՝ փոթորկալից գիշերուան մը երկմարտի պէս սեւ, ըսաւ օրհորդն:

— Մի յուսահատուի՛ր, քորիկս:

— Ինչանց կ'ուզես որ յուսամ, երբ ամէն յոյս մեզի համար կորուած է . . . : Միայնակ աշխարհիս վրայ, ոչ ազգական ունիւնք և ոչ բարեկամ, ահաւոր զոհախառնութիւն մը կը սպասէ մեզի, և այս կատաղութիւնն անգղի ճիրաննեւ, բով բռնած գմեզ՝ և ոչ իսկ կը թողու որ պաշտէ պանեղք մենք մեզի: Եթէ ռաբիկ ծնած ըլլայինք՝ կրնայինք ձեռքի աշխատանքով չափն ինք օրական ապրուստը և կամ պարգէւ ընդունիլ կայսրէն, բայց զոհախառնաբար պատրիկներն էնք, և մեր անխնայ արիւնն պիտի այրէ ու տոչոյճ գմեզ իբր հրաբլիթային հալած ինկթ մը՝ եթէ զայն քննք տանիւնը շաղախին մէջ. համբաւաւոր անուն մը բեռ մ'է որ կը ճնշէ զոհախառնութեան մէջ. Վաղերիա ստատիկ յուզումով մը արտասանեց այս խօսքերը, և իր չքննող գէմքն թրկեցաւ արցունքով:

— Լսէ ինծի, քորիկս, կ'ուզեմ յայտնի քեզի հիմայ իմ ծրագիրս, ըսաւ Մարկեղոս, և օրհորդն ուշադրութիւնը բոլորովին անոր դարձուց: Գոհարեղեններու վաճառու մէջ եկած դըրամն կրնայ բաւական ամփոօնը բաւել մեզի, բայց վերջը . . . վերջն այլ եւս բան մը պիտի չունենանք. ուստի մեր գլխուն գալիք այս դրժ-

բակտութեան առջեւն առնելու համար՝ եկուր երկուքի բաժնենք այս դրամը՝ որուն մէկ մասը դու կ'առնաս, միւս մասն ալ ես հետս կը տանիմ, վստն գի արդէն որոշած եմ մեկնել Դաւա՝ մատիա:

— Մեկնի՛ր, գոչեց Վաղերիա՝ զարհուրած եղբորը յայտնած ծրագրէն:

— Այո, աւելցուց Մարկեղոս, պէտք եմ մեկնիլ՝ որպէս գի կարենամ քիչ մը բան ձեռք ձգել մեր մօրեղբորը ժառանգութենէն, և միանգամայն սահմանարեւ պարտատէղները՝ որոնք օգտուեր են մեր բացակայութենէն . . . Եթէ կարելի եղաւ ինծի նաւաբեկութենէն մնացած բաները ձեռք ձգել՝ այս առնեն տուն մ'է կը գնենք և կը դառնանք ապրելու հոն, փոխանակ այս պէս խեղճութեան կեանքներին անցնելու այս տխուր բնակարանին մէջ:

— Ո՛հ, պէտք է հարստութիւն ունենալ ապրելու համար, ըսաւ Վաղերիա:

— Այո, կը դառնանք ժպտելու կեանքին, վրայ բերաւ Մարկեղոս. բայց եթէ ամէն ինչ մնացած է, այն առնեն ես զինուոր կ'ըլլամ և կը մտնիմ կռուելով բարբարոսներու դէմ:

— Իս ալ երակներս կը բաւամ, աւելցուց Վաղերիա. յորում չկար քրիտառական կրօնը՝ որ ստիճէր մտածութիւնը այսպիսի ոճրագործութեան մը՝ զոր հեթանոսներն կը համարէին իբր վերջին դարման կեհեհան և զօքսիտ հագույ մը:

Մինչդեռ երկու երիտասարդներն սովորականի պէս կ'երգեին, մարդ մը երկար քայլերով կը քալէր կործանած տան սենեկի մը մէջ, և երբեմն երբեմն դուռը կարկառելով գլուխը ճեղքուածքէ մը՝ զոր ժամանակի բացեր էր պատին մէջ, կ'ըսէր ինքիւն.

— Ո՛վ կը բնակի արդեօք այս խրճիթն մէջ . . . Երբէկ առաւօտը լուսննալուսն ինծի այնպէս երեցաւ. որ իմ մարդ մը և տղայ մը տեսայ. թերեւս զօքսիտներ ըլլան՝ որոնք կ'ուզեն մարդիկներու աչքերէն ծածկուիլ. այո՛, զօքսիտներ, բայց ոչ յանցաւորներ: Ա՛հ, զօքսիտութիւնն այդեան սաստիկ չէ երբ խցի խալթին յատալ չէ եկած . . . Աստուած յաւիտեական, եթէ համարձակէի արօթիլ, քեզի պիտի արօթէի այն ամենուն համար՝ որոնք որ կը անշուշտին աշխարհիս վրայ . . . :

Այս ըսելով՝ հեռացաւ անիկայ ծակի քովէն և սկսաւ նորէն երկար քայլերով պտտիլ սենեկին մէջ, և յետոյ հանգիւցաւ յարդալից անկողնի մը վրայ, և լուսնի լոյսն կամարի ճեղքուածքէն ներս թափացնելով՝ ցուցաւ Տիբեիսի հաւապարիկ գէմքն վրայ, որ ուրիշ բնակարան չունենալով կը ննջէր այն աւերակներուն մէջ՝ որոնք բայն եղած էին բուերու և ջրէնկներու:

Երբ Մարգիս խոր քունի մէջ կ'ընկնէր, Միտս կամացուկ մը կ'ելլէր իր տնակէն, և աւերակներու մէջ բնակող այս մարդը ճանչնալու հետաքրքրութեան շարժած՝ այժի պէս կը մտաւրցէր վեր կ'ելլէր կործանած սահմաններն, և շունչը բռնելով՝ չորս ուղիք վրայ կը գլորտըկուէր:

մինչեւ հաւաքարին քով. բայց այսու հանգերմ անոր սպիտակ մազը միայն կրնար տեսնել, վասն զի Սարգիս մէկ թնեւը կը ծածկէր դէմքը: «Խեղճ ծիր, տուն գի չունի ուր պառկի» խորհրդածեց թզուկն, և ձեռքը գրպանը խօթելով՝ փոքրիկ դրամ մը դուրս հանեց անկէ և դրամ գայն ծերուն անկողնին քով. աղքատին լուսմայն էր՝ որ աստուածային կշիռքին մէջ կը կշռէր հարուստին գանձին չափ:

Այն տունէն իշնելոյ վերջ՝ Միլոս դարձաւ նորէն իր ծակոյվը, և չկրնարով քնանալ՝ սկսաւ իր սիրելի տէրերուն ապագային վրայ մտածել՝ և միտքը դրաւ որ երթալ Դեկտտին, և իմացնէ այս բարի պարտիկին՝ Վաղերիայի և Մարկեղղոսին գլխուն եկած դժբախտութիւնը. բայց լաւ մը մտածելով՝ զարհուրեցաւ իր այս դիտաւորութենէն. վասն զի մանկական հասակէն միշտ վարժած ըլլալով ամենուն խաղը ըլլալու, և կուրորէն հնազանդելու իր տէրերուն, ոչ զօրութիւն ունէր և ոչ կամք՝ ինքրամէն գործ մ'ընելու, և նոյն իսկ ինք իր վրայ կը զարմանար մտքին մէջ յղանալուն վրայ գործ մը՝ որ իրեն պատուիրուած չէր:

Երկրորդ առաւօտը կանուխ Մարկեղղոս գնաց եղանց Հրապարակին շրջակայքը, որպէս զի ճամբորդութեան համար վարձէ այն կառքերէն մին՝ որոնք կը կոչուէին Հեփպոս, զոր սովորաբար կը քաշէն չորս զոյգ շորիներ, իրարու ետեւ կապուած, և թղթատարի պաշտօն կը կատարէին արքունական ճամբարներուն մէջ, և ահա հատ մը սակարկելէն վերջ՝ նորէն տուն դարձաւ՝ որպէս զի հրաժեշտի ողջոյնը տայ իր քրոջ:

Հասն սրտամտիկ եղան երկու երիտասարդներու վերջին ողջոյններն: Վաղերիայ չէր ուզեր բաժնուիլ եղբորմէն, և արտասուալից կը պաշտէր որ զինքն ալ իրեն հետ մէկտեղ Կալմաստի տանին:

Միշտ ցաւալի է բաժնուելու վայրկեանն, բայց դեռ աւելի ցաւալի է այն՝ երբ դժբախտութիւնն բռնի կը բաժնէ իրարմէ մտերիմները՝ քշելով զանոնք հեռաւոր աշխարհներ, և հազիւ խաբէական յոյս մը թողլով անոնց սրտին մէջ՝ նորէն դառնալու իրենց հայրենի վառարանը:

Հասն դժուարութեամբ բաժնուեցաւ Մարկեղղոս Վաղերիայէն, և յուսահատի մը պէս փախաւ գնաց միայնակեցի խրճիթէն:

Զարհուրած ու ապշած նայուածքով հեռեւեցաւ օրիորդն եղբորը, որ երբ այլ եւս չէր տեսնուի, այն ատեն իր դէմքն ինկազարի տագնապալից երեւոյթ մ'առաւ՝ և ցաւոց վերջին նապակիթակէտի հասնելով գոչեց.

— Միայնակ, այլ եւս չունիմ մէկը՝ որ կանայ պաշտպանել՝ զիս:

— Աստուած քեզի հետ է, բոս թզուկն որոշ ձայնով:


— Աստուած, աւելցոյց Վաղերիա բոլորովին աչքերը տնկած Միլոսին վրայ. յետոյ իր թեւերն կախուած վար ընկան, և լքեալ ձայնով

մը վրայ բերաւ. Ես բնաւ չեմ մտածած անոր վրայ . . . :

Որիորդի ձայնն կը յայտնէր խղճի խայթ մը. այդ վայրկենին թերեւս աստուածային ներշնչութիւն մը կ'ըսէր իրեն՝ թէ դժբախտութեան խաւարին մէջ կը գտնուի ազօտ լոյս մը, հարբստահարութիւններու ատեն կայ ձեռք մը որ նեղուկ կ'ըլլայ, յուսահատութեան մէջ կայ յուսոյ կայծ մը, փրկութեան խարխիս մը. և այս աստուածային լոյսն՝ որ կը փայլի խաւարի մէջ, այս ամենակարող ձեռքն, այս խարխիսն՝ որուն կը կաշի նաւաբեկեալին ձեռքն, կը կոչուի Աստուած:

Թզուկն իր պարզամտութեամբ ըսեր էր այս խօսքս. Վաղերիա Աստուծոյ գաստ մէկը չունէր, բայց ինքն բնաւ չէր մտածած անոր վրայ, և ի՞նչպէս կրնար մտածել այն ժամուն:

Շարաշարիկ



ՆՈՐԱՎԵՊ

ԱՐՄԵՆԱԿԻՆ ՅՈՅՍԵՐԸ

(Շար. տնի էջ 376)

Շոգեմաւ մը խարխիսը ձգեց գեղեցիկ քաղաքի մը դիմաց, հոն քանի մը ժամ կենալու համար. Դիչ վերջ արդէն շրջապատուեցաւ նաւակներով որոնց մէջէն նաւավարները ձկնափու, ձկնափու կը պոռային. և ճամբորդներուն մեծ մասն իրենց դատարկ ժամերն անցնելու համար՝ շոգեմաւէն վար իջան այդ գեղեցիկ քաղաքը մօտէն դիտելու:

Կաւապետը մօտեցաւ պատանոց մը որ սինի մը յեցած՝ տխուր ու անորոշ նաւաւորներ կ'ողողէր ձկնովային. այնքան խեղճ հագուած էր՝ որ նաւապետն իսկ գուշակեց թէ այդ թշուառը կարողութիւն չունէր ձկնուրկան տեսնելու: Մօտեցաւ պատանոցն և անգողերէն լեզուով սկսաւ հարցումներ ըսել: Պատանին տաճկերէն լե-

Ուղղութիւնը. — Եւսի յէջ 394, իբր 2 ծելթ. « Լուսաւորի և Մամիկոնեանց ազգակցութեան մասին արդէն կապած յայտնուած է. — միայն Մամիկոնեանց պարթեական անունները ի նկատի առնելով, — վերջինչաւ ուսումնասիրութեան մէջ, էջ 17 »: